Դիմեք ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստների համար նախատեսված Լեզվի դասընթացների ֆոնդին

RFSL-ը 2023 ակադեմիական տարվա անգլերենի անհատական կամ խմբայի դասընթացների համար ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստներից ընդունում է նոր հայտեր: Լեզվի դասընթացների ֆոնդին դիմելու համար դուք պետք է մեր գործունեության 4 երկրներից մեկում լինեք ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստ և ունենաք առաջնորդության ապացուցելի փորձ: Դուք նաև պետք է հետևեք հայտի անհրաժեշտ քայլերին ու վերջնաժամկետին:

Ի՞նչ է Լեզվի դասընթացների ֆոնդը

Նախաձեռնությունը իրականացվում է RFSL Արևելյան գործընկերության տարածաշրջանի, ԼԳԲՏԻՔ+ իրավունքների Շվեդական ֆեդերացիայի կողմից և տարածաշրջանի ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստներին տրամադրում է կարողությունների հզորացման հնարավորություն: Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել անհատ ակտիվիսների անգլերենին հասանելիությունը և արտերկրում կամ իրենց երկրներում անգլերենի իմացություն պահանջող աշխտանքային և կապերի ձևավորման նոր հնարավորություններ ստեղծելու միջոցով, ամրապնդել համայնքի կայունությունը: Այս նախաձեռնությունը նաև նպատակ ունի նպաստել դոնորական ֆինանսավորման և համապատասխան մասնագիտական նյութերին հասանելիության ապահովմանը:

Դիմորդները պետք ա հստակ պատկերացում ունենան, թե դասընթացներին մասնակցելը ինչպիսի ներդրում կարող է ունենալ իրենց մասնագիտական զարգացման մեջ: 2023թ.-ին անգլերենի դասընացներ անցնելու համար RFSL-ը ֆինանսական աջակցություն կտրամադրի շուրջ 60 ակտիվիստի:

Ֆոնդը նախատեսված է նվազագույնը՝ 3, առավելագույնը 6 ամիս տևողությամբ անգլերենի առցանց կամ առերես դասընթացների համար: Հաջող հայտ ունենալու համար խնդրում եք նախապես համոզվել, որ դուք համապասխանում եք ծրագրի պահանջներին, կարող եք ամբողջությամբ ավարտել գործընթացի բոլոր փուլերը և ունեք հայտադիմումը վերջնականացնելու համար պահանջվող փաստատղթերը: Խնդրում ենք ուշադրությամբ կարդալ հաջորդող էջերը:

Ի՞նչ է ներառված

- Ուսման վարձի ամբողջական ապահովում: Դասընթացը սկսելու սկզբում RFSL-ը կրթական հաստատությանը կվճարի ամբողջ ընթացքի համար անհրաժեշտ վարձը: Կախված ձեզ կարիքներից, դասընթացները կարող են ներառել լեզվական տարբեր հմտությունների զարգացում: Դրանց ընթացքում կարող եք բարելավել անգլերենի գրելու, լսելու, խոսակցական ու երկխոսություններ վարելու Ձեր հմտությունները:
- Սահմանափակ լրացուցիչ ֆինանսական աջակցություն՝ հոգալու ինտերնետի, երեխայի խնամքի և ուսումնական հաստատություն հասնելու համար անհրաժեշտ ծախսերը:
- Դասընթացն ավարտելուց հետո ուսումնական հաստատության կողմից անգլերենի իմացության վկայական:
- Շրջանավարտների ցանցին անդամակցություն, որտեղ, որպես անդամ, դուք կարող եք ստանալ կարողությունների զարգացման, կապերի ստեղծման ու մասնագիտական աճի գործընթացը շարունակելու եզակի հնարավորություն:

Չափանիշներ

2023 ակադեմիական տարվա համար RFSL-ի լեզվի դասընթացների ֆոնդը

առաջնայնություն կտա տրանս*, ոչ-բինար, գենդերային բազմազան և բի+ համայնքի անդամներին Հայաստանից, Վրաստանից, Մոլդովայից և Ուկրաինայից: Այն անհատները, ովքեր տեղահանվել կամ պատերազմի/կոնֆլիկտի, և/կամ այլ անվտանգության ռիսկերից ելնելով ստիպված փոխել են բնակության վայրը ևս կարող են դիմել, եթե

համապատասխանում են անհրաժեշտ մյուս չափանիշներին:

Չնայած նրան, որ առաջնայնությունը կտրվի ակտիվիստներին, ովքեր նոմինացվել են մեր ֆինանսական գործընկեր կազմակերպությունների կողմից, անհատ ակտիվիստներին, ովքեր չեն ներկայացնում որևէ կազմակերպություն, նույնպես խրախուսում ենք դիմել:

Օտար լեզվի նախնական իմացություն **չի** պահանջվում: Ծրջանավարտ անդամները նույնպես կարող են դիմել՝ շարունակելու իրենց ուսուցումը:

Քաղաքացիության երկիրը

Դուք պետք է լինեք հետևյալ որևէ երկրներից մեկի քաղաքացի՝ Հայաստան, Վրաստան, Մոլդովա կամ Ուկրաինա: Չնայած սրան, պարտադիր չէ դիմելու պահին բնակվել նշված երկրում: Երկքաղաքացիություն ունեցող անձինք նույնպես կարող են դիմել, եթե նրանք հանդիսանում են վերոնշյալ երկրներից գոնե մեկի քաղաքացի:

ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստական փորձ

Լեզվի դասընթացների ֆոնդին դիմելու համար դուք պետք է ունենաք առաջնորդության փաստագրված փորձ՝ որպես ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստ: Ձեր համապատասխանությունը կորոշվի՝ հիմնվելով ՀԿ-ներում՝ որպես գործատու, աշխատակից, ֆրիլանսեր, փորձնակ կամ կամավոր Ձեր ներգրավվածության վրա: Ծրագրին Ձեր համապատասխանությունը պետք է հաստատվի երկու երաշխավորագրով: Դիմորդներից կպահանջվի հաստատել սա իրենց հայտերում:

Եթե դիմելու պահին դուք աշխատում եք և պլանավորում եք դասընթացներին մասնակցել Ձեր աշխատանքային ժամերին, խորհուրդ ենք տալիս քննարկել հայտը Ձեր գործատուի հետ: Ձեր պատասխանատվությունն է նախապես համոզվել, որ կարող եք դասընթացին մասնակցելու համար բացակայել աշխատանքից, եթե ընտրվեք որպես մասնակից:

Առաջնայնությունը կտրվի առաջնորդության փորձ ունեցող դիմորդներին, **սակայն պարտադիր չէ դիմելու պահին աշխատանք ունենալ:**

Պահանջներ ընտրվելուց հետո

Բոլոր դիմորդները պետք է՝

- Կապվեն ընտրված ուսումնական հաստատության հետ լեզվի մակարդակի որոշման թեստ հանձնելու համար:
- Ուսումնական հաստատության հետ պլանավորեն դասընթացի իրենց ժամանակացույցը, ժամերն ու ինտենսիվությունը:
- Հարցերի, բարդությունների և չնախատեսված հանգամանքների (օրինակ՝ դասընթացները շարունակել չկարողանալու, ուսուցչին փոխելու ցանկության, դասերին անապահով զգալու և այլն) դեպքում կապի մեջ լինեն համապատասխան երկրի խորհրդատուի հետ:
- Տրամադրեն կարճ ինքնագնահատում և հետադարձ կապ կրթաթոշակը ստանալուց առաջ, ընթացքում և հետո:
- Պատասխանատվություն վերցնեն հնարավորությունների սահմաններում հետևել

լեզվի դասընթացի ժամանակացույցին:

Ցանկության դեպքում կարող եք կրթաթոշակի Ձեր հայտում մեկնաբանել, թե ինչպես է այս հնարավորությունը կապված ապագայի Ձեր նպատակների հետ (եթե կապված է):

Հաշվետվություն և գնահատում

Դասընթացն ավարտելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, մասնակիցները պետք է ներկայացնեն կարճ հաշվետվություն՝ իրենց առաջադիմության և դասընթացի ընթացքում ձեռք բերված գիտելիքի կիրառելիության մասին: RFSL-ը նաև կապ կհաստատի

մասնակիցների հետ՝ գնահատելու կանչից և դասընթացից նրանց բավարարծության մակարդակը: RFSL-ը կդրամադրի նաև հաշվետվության ձևանմուշ:

Ժամանակացույց և լոգիստիկա

1. Կրթաթոշակին դիմելու ժամանակահատված՝ **մինչև մայիսի 15-ը:** 2. RFSL-ի կողմից հայտերի դիտման և գնահատման ժամանակահատված: 3. Ընտրված մասնակիցների հետ կապի հաստատում՝ **մինչև մայիսի 18-ը:**
4. Դասընթացների մեկնարկ:

Կրթաթոշակին դիմելու վերջնաժամկետը մայիսի 15-ն է: RFSL-ը կապ կհաստատի ընտրված դիմորդների հետ մինչև մայիսի 18-ը, իսկ դասընթացները կմեկնարկեն հունիսից:

RFSL-ը կաշխատի լեզվի կենտրոնների կամ պրոֆեսիոնալ անհատ ուսուցիչների հետ, ովքեր լեզվի դասընթացներ են տրամադրում դիմորդների անհրաժեշտ թվով տեղեր ապահովելու համար: Կախված դիմորդի անհատական կարիքներից, դասընթացները կարող են հարմարեցվել նրանց նախընտրություններին: Ժամանակացույցի և պայմանավորվածությունների հետագա մանրամասները կարող են քննարկվել ուսումնական հաստատությունների և ուսուցիչների հետ:

Հայտադիմումը հասանելի է առցանց

Մոտիվացիոն նամակը որոշիչ դեր կունենա Ձեր հայտը գնահատելիս: Դուք կարող է ուղարկել ընդամենը մեկ հայտ:

Հայտադիմումները ներկայացնելու վերջնաժամկետից հետո մենք կդիտարկենք բոլոր հայտերը և կհեռացնենք նրանք, որոնք չենք համապատասխանում նշված չափանիշներին: Եթե դուք չեք հետևել պահանջվող փաստաթղթերի ցուցումներին, ապա ձեր հայտը չի դիտարկվի: Պատճառները ներկայացված են հայտերում, ուստի խնդրում ենք դիմելուց և փաստաթղթերն ուղարկելուց առաջ մանրամասն կարդալ ներկայացված ամբողջ տեղեկատվությունը:

RFSL-ը պարտավորվում է տեղեկացնել Ձեր հայտի կարգավիճակի մասին, ոչ ուշ քան վերջնաժամկետի ավարտից մեկ ամիս հետոն:

Անվտանգության ընթացակարգեր

Ձեր հայտին ընթացք տալու համար Մենք օգտագործում ենք Ձեր կողմից տրամադրված անձնական ինֆորմացիան: Եթե Ձեզ տրամադրվի կրթաթոշակ, ապա հետագա գործընթացներն իրականացնելու համար մենք կշարունակենք օգտագործել Ձեր անձնական ինֆորմացիան: Մենք այս ինֆորմացիայի հետ աշխատում ենք՝ հետևելով տեղեկատվության հանրային հասանելիության շվեդական սկզբունքին և ԵՄ տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգին (GDPR): Ձեր անձնական տվյալները մշակվում են RFSL-ի աշխատակիցների և արտաքին փորձագետների

կողմից, ովքեր ստորագրել են համապատասխանության պայմանագիր:

Հարցեր

Հարցերի դեպքում խնդրում ենք մեզ հետ կապվել հետևյալ էլ. հասցեի միջոցով՝ marukian.aida@gmail.com և մենք կքննարկեք դրանք: Եթե նախընտրում եք մեզ հետ կապը պահել ավելի ապահով հարթակում, ապա խնդրում ենք հաղորդակցման հարթակը քննարկելու համար կապվել մեզ հետ:

Հաճախ տրվող հարցեր

Հայտերի ընթացակարգը

1. Ինչպե՞ս կարող եմ դիմել լեզվի դասընթացների ֆոնդին

Դուք պետք է լրացնեք հայտադիմումը՝ անցնելով համապատասխան հղումով:

Հայաստանից հայտերի համար՝
https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSdMGOgyz6IOPEJE5YI3NXLSb86_C9kCYhC9nQ4gRlwtD7kq3w/viewform

2. Ի՞նչ պետք է անեմ, եթե հայտիս հետ կապված խնդիր կա:

Եթե հայտադիմումի հետ կապված որևէ խնդիր առաջանա, կապ հաստատեք մեզ հետ և մենք հնարավորինս կաջակցենք Ձեզ:

3. Կարո՞ղ եմ ամեն դեպքում դիմել կրթաթոշակին, եթե բաց եմ թողել լեզվի դասընթացների ֆոնդին դիմելու վերջնաժամկետը:

Հայտադիմումների ընդունման շրջանն ավարտվում է 2023թ.-ի մայիսի 15-ին: Եթե դիմեք ավելի ուշ, մենք չենք կարողանա գնահատել ձեր հայտը, ուստի այն չի կարող դիտարկվել: Եթե կարծում եք, որ դուք լավագույնս համապատասխանում եք հայտի չափանիշներին և ցանկանում եք, որպեսզի ձեր հայտը հաշվի առնվի 2024 ակադեմիական տարվա համար,
խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ և մենք կավելացնենք Ձեր անունը ռեզերվային ցուցակում, որպեսզի հայտադիմումների հաջորդ շրջանի բացվելուն պես տեղեկացնենք Ձեզ:

Խնդրում ենք հաշվի առնել, որ եթե ցանկանաք ավելացնել Ձեր անունը ռեզերվային ցուցակում, RFSL-ը կօգտագործի տրամադրված անձնական ինֆորմացիան դիմումին ընթացք տալու համար: Ձեր անձնական ինֆորմացիան կպահպանվի մինչև 2024թ.-ի հայտադիմումների շրջանը: Եթե ստանաք կրթաթոշակ, ապա մենք կշարունակենք օգտագործել Ձեր անձնական ինֆորմացիան կրթաթոշակի գործընթացը իրականացնելու համար: Մենք աշխատում ենք այս ինֆորմացիայի հետ՝ հետևելով տեղեկատվության հանրային հասանելիության շվեդական սկզբունքին և ԵՄ տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգին (GDPR): Ձեր անձնական տվյալները մշակվում են RFSL-ի աշխատակիցների և արտաքին փորձագետների կողմից, ովքեր ստորագրել են համապատասխանության պայմանագիր:

4. Ե՞րբ է հայտադիմումների ներկայացման շրջանը:

Հայտադիմումների շրջանը 2023թ.-ի ապրիլի 27-ից մայիսի 15-ն ընկած հատվածն է:

5. Ինչպե՞ս կարող եմ ուղարկել իմ հայտը:

Հայտերն ընդունվում են համապատասխան Google form-երի միջոցով: Չնայած սրան, որոշակի արտառոց և անկանխատեսելի իրավիճակներում հայտերը կարող են ընդունվել նաև էլ. փոստի միջոցով: Եթե ցանկանում եք ձեր հայտն ուղարկել էլ. փոստի միջոցով, խնդրում ենք **այստեղից** ներբեռնել համապատասխան հայտադիմումը,

լրացնել և այն մեզ ուղարկել հայտերի ընդունման ժամանակահատվածում: Մինչև դիմելը, շատ կարևոր է ամբողջությամբ կարդալ մեր կայքում առկա տեղեկատվությունը, ինչպես նաև՝ հայտերում եղած ցուցումները:

6. Ի՞նչ լեզվով է անհրաժեշտ լրացնել հայտադիմումը:
Հայտերն անհրաժեշտ է լրացնել ձեր մայրենի լեզվով կամ անգլերենով:

Կրթաթոշակի ժամանակաշրջան

1. Հնարավո՞ր է հետաձգել կրթաթոշակի շրջանը կամ վերցնել ուսումնական արձակուրդ:

Հետաձգումը կամ ուսումնական արձակուրդը հնարավոր են միայն բացառիկ և անկանխատեսելի իրավիճակներում: Ֆոնդը նաև հնարավորություն է տալիս 3-ից 6 ամսվա ընթացքում ցանկացած կերպ բաշխել ձեր ուսումնառության ժամանակը, եթե, իհարկե, այն ավարտեք մինչև 2023թ.-ի նոյեմբեր ամիսը: Նմանատիպ իրավիճակները, սակայն, պետք է ամենասկզբից ներառված լինեն Ձեր ուսումնառության պլանում և քննարված լինեն ուսումնական հաստատության, ինչպես նաև Ձեր երկրի խորհրդատուի հետ:

Հայտադիմումի վճար

1. Անհրաժե՞շտ է վճարել հայտադիմումի գումար:

Լեզվի դասընթացների ֆոնդի հայտադիմումի գումար նախատեսված չէ:

Անհրաժեշտ փաստաթղթերը

1. Ի՞նչ փաստաթղթեր պետք է ուղարկեմ:

Խնդրում ենք հետևել կանչի և հայտադիմումի մեջ ներկայացված ցուցումներին լեզվի դասընթացների ֆոնդին դիմելու համար:

2. Արդյո՞ք իմ աշխատանքային և առաջնորդական փորձառությունները վավեր են:
Ցավոք, մենք չենք կարող նախապես մեկնաբանել կամ օժանդակել անհատական հայտերը, քանի որ դա անարդարացի առավելություն կստեղծի: Խնդրում ենք ինքնուրույն վերանայել և որոշել, թե հայտի մեջ ներառելու համար որոնք են Ձեր ունեցած լավագույն փորձառությունները: Եթե հավատացած եք, որ Ձեր փորձածությունները պետք է դիտարկվեն իբրև աշխատանքային/առաջնորդական փորձ, ապա կարող եք ներառել դրանք, եթե, իհարկե, դրանց համար կարող եք ներկայացնել պահանջվող ապացույց կամ հաստատում: Փորձառությունները, որոնք չեն կարող հաստատվել ըստ մեր պահանջների, ընտրող հանձնաժողովի կողմից չեն դիտարկվի:

3. Անգլերենի իմացության ի՞նչ պահանջներ ունեք:
Անգլերենի իմացության որևէ պահանջ չկա: Լեզվի նախնական իմացությունը պարտադիր չէ:

4. Կարո՞ղ եմ իմ փաստաթղթերն ուղարկել այլ ձևաչափով:
Փաստաթղթերի այլ ձևաչափով տրամադրումը հնարավոր է միայն բացառիկ և անկանխատեսելի դեպքերում: Խնդրում ենք նախապես կապ հաստատել մեզ հետ և մենք լուծում գտնելու հարցում կաջակցենք Ձեզ:

5. Արդյո՞ք պետք է ներկայացնեմ երաշխավորագիր:
Ձեզնից երաշխավորագիր ներկայացնել չի պահանջվում:

6. Արդյո՞ք պետք է ուղարկեմ CV.
CV ուղարկել չի պահանջվում:

7. Պե՞տք է տրամադրել անգլերենի իմացությունն ապացուցող փաստաթուղթ: Չի

պահանջվում տրամադրել անգլերենի իմացությունն ապացուցող փաստաթուղթ:

8. Ես առաջնորդական փորձառություն ունեմ մեկից ավելի տեղերում, ո՞րը պետք է նշել հայտում:

RFSL-ը ընդունում է երկու երաշխավորի անուն և կոնտակտային տվյալներ: Երաշխավորագրերից գոնե մեկը պետք է հիմնված լինի Ձեր աշխատանքային փորձառության վրա (ներառյալ կես և լրիվ դրույք աշխատանքային զբաղվածությունը, ինչպես նաև պրակտիկայի, կամավորության և ֆելոուշիփի փորձառությունը): Որպես

առավելություն կդիտարկվի, եթե երկրորդ երաշխավորագիրը վերաբերի Ձեր հիմնական աշխատավայրից դուրս գտնվող քաղաքացիական հասարակության կազմակերպություններում կամ ցանցերում Ձեր ներգրավվածությունը:

9. Ես գտնվում եմ այնպիսի իրավիճակում, որ չեմ կարող տրամադրել աշխատանքի կամ առաջնորդության փորձառության անհրաժեշտ ապացույցը: Ի՞նչ պետք է անեմ:

Բացառիկ և անկանխատեսելի իրավիճակներում գտնվելու դեպքում, երբ չեք կարող տրամադրել փորձառության անհրաժեշտ ապացույցը՝ կցելով երկու երաշխավորագիր, խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ և մենք կփորձենք (հնարավորության դեպքում) լուծում գտնել: Եթե ամեն դեպքում չկարողանաք հաստատել առաջնորդության Ձեր փորձառությունը, Ձեր հայտը չի դիտարկվի:

Ո՞վ կարող եք դիմել

1. Ինչպե՞ս կարող եմ իմանալ արդյոք համապատասխանում եմ կրթաթոշակի պահանջներին

Լեզվի դասընթացների ֆոնդին համապատասխանելու համար, դուք պետք է համապատասխանեք հայտում նշված չափանիշներին:

2. Ես այժմ բնակվում եմ նշված երկրների ցանկում չգտնվող երկրում: Կարո՞ղ եմ ամեն դեպքում դիմել: Դուք կարող եք դիմել, եթե հանդիսանում եք Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի կամ Ուկրաինայի քաղաքացի և տեղահանվել կամ պատերազմի/կոնֆլիկտի, և/կամ այլ անվտանգության ռիսկերից ելնելով ստիպված փոխել եք բնակության վայրը, եթե, իհարկե,
համապատասխանում եք հայտում նշված մյուս չափանիշներին:

3. Ես ունեմ երկքաղաքացիություն, դրանցից ո՞ր մեկն է պետք օգտագործել հայտում: Դուք պետք է լինեք նշված երկրներից որևէ մեկի քաղաքացի: Չնայած սրան, պարտադիր չէ դիմելու պահին բնակվել նշված երկրում: Եթե ունեք երկքաղաքացիություն, ապա կարող եք դիմել կրթաթոշակին, եթե հանդիսանում եք վերոնշյալ երկրներից գոնե մեկի քաղաքացի:

4. Դուք համալսարանի ուսանողներին տրամադրո՞ւմ եք կրթաթոշակ: Ոչ, RFSL-ը համալսարանի ուսանողներին կրթաթոշակ չի տրամադրում:

5. Արդյո՞ք առկա են փոխանակման ծրագրերի, ճանաչողական այցերի կամ համալսարանական ծրագրերի այլ կրթաթոշակներ:

Ոչ, այս պահին չկա որևէ կրթաթոշակ նախատեսված փոխանակման ծրագրերի, ճանաչողական այցերի կամ համալսարանական ծրագրերի համար:

6. Կարո՞ղ եմ դիմել անգլերենից բացի այլ լեզու սովորելու համար:

Այս նախաձեռնությունը հիմնականում ուղղված է լինելու անգլերենի հմտությունների բարելավմանը: Եթե այլ լեզուները համապատասխան գնահատվեն, կարող են բացառություններ արվել: Խնդրում եք կապ հաստատել մեզ հետ և մենք կփորձենք

(հնարավորության դեպքում) լուծում գտնել: